ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՀԱԿՅԱՆ ՄԱՐԻՆԵ ԱՆԱՏՈԼԻԻ

# ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՍՈՖՅԱ ԱՐՂՈՒԹՅԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐՈՒՄ

ԺԳ.00.01. «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր **Ս. Ա. Մարության**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոկտոր, պրոֆեսոր **Լ.Թ. Ասատրյան**

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ա. Լ. Մինասյան**

Առաջատար կազմակերպություն՝ Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. մայիսի 22-ին ժամը 14.00-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. ապրիլի 22- ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ՝ Ա.Հ.Սվաջյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտության արդիականությունը:** Ուսումնասիրության այժմեականությունը պայմանավորված է հայ նախադպրոցական մանկավարժության ականավոր ներկայացուցիչների գիտական ժառանգությանը կրկին անդրադառնալու պահանջով, այն մանրակրկիտ վերլուծելու և նախադպրոցականի դաստիարակության ժամանակակից համակարգում տեղայնացնելու անհրաժեշտությամբ: 19-րդ դարի երկրորդ կեսին հասարակական հախուռն շարժման և առաջավոր գաղափարներով լեցուն հայ անվանի կանանց շարքում իր արժանավոր տեղն ունի հայտնի մանկավարժ, նախադպրոցական տարիքի երեխայի դաստիարակության գործին անմնացորդ նվիրյալ, հասարակական գործիչ Սոֆյա Արղությանը: Նրա հասարակական և մանկավարժական կեսդարյա գործունեությունը սերտորեն կապված է հայ ժողովրդի մշակույթի տարածման, հայ մանուկների կրթության, մանկավարժական մտքի զարգացման հետ: Իր բազմաթիվ զեկույցներում, հոդվածներում և ուսումնական ձեռնարկներում Ս. Արղությանն առաջին հերթին կարևորել է երեխային փոքր տարիքից հայրենասիրական, ազգային գաղափարներով և ավանդույթներով դաստիարակելու անհրաժեշտությունը, քանի որ նախադպրոցական տարիքում են ի հայտ գալիս և դրսևորվում ազգային պատկանելիության հատկանիշներն ու ենթագիտակցաբար փոխանցվող ազգային մտածելակերպի կարծրատիպերը:

Ս.Արղությանի գաղափարների մանրակրկիտ ուսումնասիրությունն ու հոգեբանամանկավարժական վերլուծությունը ցույց են տալիս, որ այդ գաղափարները՝ ժամանակակից մանկավարժության դիտանկյունով, պարունակում են մի շարք արժեքավոր դրույթներ, որոնք կարող են լուրջ վերակառուցման ենթարկել հայրենասիրական, ազգային և քաղաքացիական դաստիարակության գործող մեթոդիկաները: Այս առումով, գիտական հետաքրքրություն են ներկայացնում Ս. Արղության մանկավարժական տեսության այն դրույթները, որոնք տարբեր մեթոդական հնարներով նպաստում են ազգային մտածելակերպի տարրերի անմիջական դրսևորմանը նախադպրոցական տարիքում: Նշված դրույթները ոչ միայն չեն հակասում մանկավարժության ժամանակակից շեշտադրումներին, այլ նոր շունչ են հաղորդում նախադպրոցականի դաստիարակության գործընթացին՝ առաջարկելով մանկավարժական ներգործության վաղուց մոռացված, սակայն մշտապես արդիական և արդյունավետ եղանակներ:

Դաստիարակության ժամանակակից տեսության համաձայն, ազգային մտածելակերպի ձևավորման գործընթացում առանձնահատուկ կարևորվում է երկու գործոն.

- ազգային պատկանելիության գիտակցմանն ուղղված նախադրյալների բացահայտումը, որոնք դրսևորվում են բնազդաբար;
- էթնիկական սոցիալականացումը:

Նշված գործոնների փոխազդեցության արդյունքում են, հիմնականում, երեխայի մեջ ձևավորվում ազգային հատկություններ, էթնիկ կենսակերպի հատկանիշներ, ազգային վարքագծին բնորոշ ուրվագծեր:

Ներկայումս, նախադպրոցականի դաստիարակության համակարգում շեշտակի ուշադրություն է դարձվում ազգային և հայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրներին, մշակվում և աստիճանաբար մանկապարտեզի մանկավարժական գործընթաց են ներառվում տնտեսագիտական, քաղաքացիական և իրավական կրթության մեթոդիկաներ,

որոնք միասնաբար նպաստում են երեխայի անձնավորության հենքային որակների ձևավորմանը՝ ազգապահպան և մշակութահարմար դաստիարակության պայմաններում:

Նախադպրոցական կրթության ժամանակակից հայեցակարգը պահանջում է յուրաքանչյուր երեխայի անհատականության բացահայտում, որի բաղկացուցիչ մասն են կազմում նրա ազգային մտածելակերպի տարրերը: Ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է ազգային մտածելակերպի ձևավորման ավանդական մոտեցումների մանրամասն վերլուծության անհրաժեշտությամբ, որի արդյունքում կնշմարվեն հիմնախնդրի լուծման ժամանակակից եղանակները:

Սոֆյա Արղությանի մանկավարժական ժառանգությունն, այս իմաստով, իրենից ներկայացնում է լայնածավալ և բազմաբնույթ հետազոտությունների համակարգ՝ բաղկացած ուսուցման և դաստիարակության մի շարք մեթոդիկաներից, որոնք, ունենալով ընդգծված ազգապահպան ուղղվածություն, կարող են հաջողությամբ օգտագործվել նախադպրոցականի ազգային մտածելակերպի ձևավորման գործընթացում: Տվյալ ուսումնասիրության արդիականությունը հիմնավորվում է նաև հասարակության զարգացման անցումային շրջաններում պետության կողմից կրթական համակարգի առջև դրվող խնդիրների նմանությամբ: Այս առումով, 19-րդ դարավերջի ճգնաժամի պայմաններում ապրող և ստեղծագործող հայ մանկավարժական մտքի ներկայացուցիչների, մասնավորապես, Սոֆյա Արղությանի մանկավարժական դիրքորոշումները անցումային հասարակության կրթական խնդիրների լուծման եղանակների վերաբերյալ, ոչ միայն հետաքրքիր են, այլև չափազանց արժեքավոր:

**Հետազոտության նպատակը:** Խորությամբ ուսումնասիրել Ս. Արղությանի մանկավարժական հայացքները և բացահայտել դրանց կիրառման հնարավորությունները ժամանակակից նախադպրոցականի ազգային մտածելակերպի ձևավորման գործընթացում:

**Հետազոտության օբյեկտը** նախադպրոցականի դաստիարակության և ուսուցման հիմնահարցերն են Ս. Արղությանի մանկավարժական հայացքներում:

**Հետազոտության առարկան** Ս. Արղությանի մանկավարժական մոտեցումների կիրառման հնարավորությունները ժամանակակից նախադպրոցական կրթական հաստատություններում:

**Հետազոտության գիտական վարկածը:** Ենթադրվում է, որ Ս. Արղությանի մանկավարժական հայացքները կիրառելի են ժամանակակից նախադպրոցական հաստատություններում, քանի որ դրանք

- ունեն ընդգծված ազգային ուղղվածություն, հետևաբար կարող են արդյունավետ լինել նախադպրոցականի ազգային մտածողության ձևավորման գործում**:**
- արտացոլում են ժամանակակից հասարակության պահանջները զարգացման անցումային շրջանում, հետևաբար պարունակում են նույնանման խնդիրների լուծման տարբերակներ:

**Հետազոտության խնդիրները:** Հետազոտության նպատակից և գիտական վարկածից օրինաչափորեն դուրս են բերվել հատուկ ուսումնասիրության կարիք ունեցող **հետևյալ խնդիրները**.

1. Ուսումնասիրել և վերլուծել 19-20 դդ. հայ մանկավարժական մտքի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցականի դաստիարակության և ուսուցման համատեքստում:

2. Ուսումնասիրել և վերլուծել Ս. Արղության մանկավարժական հայացքներն ուղղված նախադպրոցականի ազգային մտածելակերպի ձևավորմանը:
3. Հիմնավորել և փորձարարական ճանապարհով բազահայտել Ս. Արղության մանկավարժական հայացքների կիրառման հնարավորությունները ժամանակակից նախադպրոցական հաստատություններում: Մասնավորապես, բարոյական և աշխատանքային դաստիարակության գործընթացների կազմակերպման ընթացքում ազգային մտածելակերպի ձևավորման առանձնահատկությունների շեշտադրումները, հայրենասիրական գաղափարներով դաստիարակելու հիմնական մոտեցումները, ազգային բովանդակությամբ խաղերի և հատուկ կազմակերպվող պարապմունքների մատուցման ձևերն ու մեթոդները:
4. Հիմք ընդունելով Ս. Արղության մանկավարժական հայացքների սկզբունքային մոտեցումները՝ մշակել նախադպրոցականի ազգային մտածելակերպի ձևավորմանն ուղղված համալիր ծրագիր՝ բաղկացած հետևյալ ենթաբաժիններից.
   - նախադպրոցականի ազգային մտածելակերպի ձևավորումը համալիր պարապմունքների ընթացքում,
   - նախադպրոցականի ազգային մտածելակերպի ձևավորումը բարոյական դաստիարակության ընթացքում,
   - նախադպրոցականի ազգային մտածելակերպի ձևավորման առանձնահատկությունները աշխատանքային դաստիարակության ընթացքում,
   - խաղը որպես նախադպրոցականի ազգային մտածելակերպի ձևավորման միջոց:
5. Գնահատել համալիր ծրագրի արդյունավետությունը, Ս. Արղության մանկավարժական հայացքների կիրառելիությունը ժամանակակից նախադպրոցական հաստատություններում:

**Հիմնախնդրի տեսական և մեթոդաբանական հիմքերը:** Հետազոտության համար տեսամեթոդաբանական հիմք են հանդիսանում ժամանակակից մանկավարժության մոտեցումները դաստիարակության, մասնավորապես ազգային և հայրենասիրական դաստիարակության վերաբերյալ, ՀՀ նախադպրոցական կրթության հայեցակարգը, հայ ականավոր մանկավարժների հավաքական փորձը նախադպրոցահասակ երեխայի ազգային և հայրենասիրական դաստիարակության վերաբերյալ, (Ղ.Աղայան, Ղ.Պատկանյան, Ա.Բահաթրյան, Վ.Թորգոմյան և ուրիշներ) 19-րդ և 20-րդ դարերի հայ մանկավարժական մտքի զարգացման գերակա ուղղությունները, մասնավորապես Սոֆյա Արղության հայրենասիրական գաղափարները, արտերկրյա մանկավարժների տեսական դրույթները ազգասիրության և մարդասիրության ձևավորման համատեքստում, ինչպես և ազգային հիշողությամբ պայմանավորված էթնիկ մտածելակերպի փոխանցման հոգեֆիզիոլոգիական մոտեցումները:

Հետազոտության նպատակի և խնդիրների իրականացման համար ընտրվել են հետևյալ **մեթոդներն ու մեթոդիկաները.**

- հիմնախնդրի վերաբերյալ հոգեբանամանկավարժական և գիտամեթոդական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն,
- հիմնախնդրի վերաբերյալ հայ մանկավարժական մտքի և փորձի ուսումնասիրություն և վերլուծություն,
- նախադպրոցական տարիքի երեխաների խաղային գործունեության բովանդակության վերլուծություն,

- էմպիրիկ մեթոդներ՝զրույց, դիտում, անկետավորում, հարցումներ;
- մանկավարժական գիտափորձ,
- նախադպրոցականի բարոյական դաստիարակության մեթոդիկա ( Ս. Արղության),
- նախադպրոցականի աշխատանքային դաստիարակության մեթոդիկա ( Ս. Արղության):

**Հետազոտության գիտական նորույթը:**

1. Նորովի վերլուծվել և արժևորվել են Ս. Արղությանի մանկավարժական հայացքները նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության, ուսուցման և զարգացման գործընթացում: Առաջարկվել է ժամանակակից նախադպրոցական հաստատություններում Ս. Արղությանի մանկավարժական մոտեցումների կիրառման որոշակի տարբերակ:
2. Գիտափորձով ստուգվել և հիմնավորվել է Ս. Արղությանի մանկավարժական ժառանգության կիրառելիությունը ժամանակակից նախադպրոցական հաստատություններում:
3. Մշակվել է նախադպրոցականի ազգային մտածողության զարգացմանն ուղղված մանկավարժական աշխատանքների համալիր ծրագիր, որը կիրառելի է ինչպես նախադպրոցական հաստատություններում, այնպես էլ ընտանիքներում:

**Հետազոտության տեսական նշանակությունը:**

1. Ս. Արղությանի մանկավարժական ժառանգությունը վերլուծվել է նախադպրոցական տարիքում ազգային մտածողության զարգացման տեսանկյունից:
2. Տեսականորեն հիմնավորվել են նախադպրոցական տարիքում երեխայի ազգային մտածողության զարգացմանն ուղղված մանկավարժական պայմանները:

**Հետազոտության գործնական նշանակությունը:** Ս. Արղությանի մանկավարժական հայացքները նախադպրոցականի դաստիարակության և ուսուցման վերաբերյալ հաջողությամբ կիրառելի են ժամանակակից նախադպրոցական կրթական հաստատություններում: Ս. Արղությանի նախադպրոցականի դաստիարակության և ուսուցման վերաբերյալ մանկավարժական հայացքների հիման վրա մշակած, երեխայի ազգային մտածողության զարգացմանն ուղղված համալիր ծրագիրը կարող է օգտակար լինել նախադպրոցականի դաստիարակության գործընթացի բարելավմանն ու արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտության բազա են հանդիսացել ք. Երևանի տարբեր վարչական շրջանների մանկապարտեզները՝ թիվ 5, 20, 126: Փորձարարական աշխատանքում ընդգրկվել է նշված մանկապարտեզներ հաճախող ավագ նախադպրոցական տարիքի շուրջ 120 երեխա: Գիտափորձը իրականացվել է երեք փուլով 2006 – 2010 թթ. ընթացքում:

**Առաջին փուլում** ( 2006-2007 թթ.) ուսումնասիրվել է Ս. Արղությանի գրական, մանկավարժական ժառանգությունը, դրա և հիմնախնդրի վերաբերյալ այլ գիտական աղբյուրների վերլուծության և տեսամեթոդական իմաստավորման շնորհիվ մշակվել են հետազոտության ելակետային դրույթները: Առանձնացվել են գիտափորձի անցկացման մեթոդներն ու մեթոդիկաները, ընտրվել է հետազոտության բազան և փորձարկվողների համակազմը: Արձանագրվել են 2006-2007 թթ. 5-6 տարեկան երեխաների պատկերացումները ազգասիրության և հայրենասիրության մասին:

**Երկրորդ փուլում** ( 2007-2008 թթ.) որոշակիացվել են փորձարարական աշխատանքի կազմակերպման ձևերը, Ս. Արղությանի մանկավարժական հայացքների հիման վրա մշակվել է ազգային մտածելակերպի տարրերի ձևավորմանն ուղղված համալիր ծրագիր, նպատակային մանկավարժական աշխատանք է կազմակերպվել թիվ 5 և 20 մանկապարտեզների միջին և ավագ խմբերի երեխաների հետ: Արձանագրվել են 2007-2008 թթ. 5-6 տարեկան երեխաների պատկերացումները ազգասիրության և հայրենասիրության մասին:

**Երրորդ փուլում** ( 2008-2010 թթ.) կազմակերպվել և իրականացվել են գիտափորձով նախատեսված բոլոր աշխատանքները, ստուգվել է առաջարկված համալիր ծրագրի արդյունավետությունը, հիմնավորվել է Ս. Արղությանի մանկավարժական հայացքների կիրառման արդյունվետությունը՝ մասնավորապես նախադպրոցական տարիքում ազգասիրության և հայրենասիրության դաստիարակության համատեքստում, ընդհանրացվել և համակարգվել են փորձարարական հետազոտության արդյունքները, շարադրվել է ատենախոսությունը, ձևակերպվել են եզրակացությունները:

**Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:**

1. Հայ մանկավարժական մտքի հարուստ ժառանգության մանրակրկիտ վերլուծությունն ու վերաիմաստավորումը ժամանակակից մանկավարժության շեշտադրումների դիտարկմամբ կնպաստի այսօրվա նախադպրոցականի հայեցի դաստիարակությանը, նրա կողմից ազգային գաղափարների, սովորույթների յուրացմանը, ազգային մտածելակերպին բնորոշ հատկանիշների դրսևորմանը:
2. Ազգային մտածողության զարգացման գործընթացում կիրառելի են ականավոր հայ մանկավարժների ազգային դաստիարակության գաղափարներից բխող, նրանց կողմից առաջարկվող մեթոդիկաները, որոնք ժամանակակից կրթական հաստատություններում ներդրման ընթացքում կարիք չունեն վերակառուցման, տեղայնացման: Ազգային դաստիարակության ցանկացած մեթոդիկա ամբողջական է իր տեսակի մեջ, հետևաբար կիրառելի է առանց փոփոխությունների:
3. Ս. Արղությանի նախադպրոցականի դաստիարակության և ուսուցման վերաբերյալ մանկավարժական մոտեցումների հիման վրա մշակված, նախադպրոցականի ազգային մտածողության զարգացմանն ուղղված մանկավարժական աշխատանքների համալիր ծրագիրը կիրառելի է մանկապարտեզի մանկավարժական պրակտիկայում, այն կհարստացնի նախադպրոցականի դաստիարակության համակարգի արդյունավետ գործառնությունը:
4. Ավագ նախադպրոցականի ազգային մտածելակերպի տարրերի դրսևորումները պայմանավորված են մանկապարտեզում նշված ուղղությամբ իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների նպատակահարմարությամբ, կրթության բովանդակության ազգային ուղղվածությամբ, ինչպես նաև դաստիարակների և ծնողների ազգային դիրքորոշումներով:
5. Նախադպրոցական տարիքում ազգային մտածողության զարգացման գործընթացը սերտաճած է բարոյական և աշխատանքային դաստիարակության հետ, ազգասիրության դրսևորումները բացահայտվում են ստեղծագործական խաղերի ընթացքում, ազգային գաղափարներն յուրացվում են ուսուցման շնորհիվ, հետևաբար հիմնախնդրի լուծման արդյունավետությունը պայմանավորված է մանկավարժական աշխատանքի գիտամեթոդական տեսանկյունից գրագետ կազմակերպմամբ:

6. Նախադպրոցական տարիքում ազգային մտածողության տարրերը համապատասխան սոցիալական իրադրություններում դրսևորվում են բնազդաբար, մանկավարժական ուղղորդման պայմաններում տեղի է ունենում ազգային առանձնահատկությունների գիտակցում և արժևորում:

**Հետազոտության տեսական և մեթոդական դրույթների հիմնավորվածությունն ու հավաստիությունը:** Ուսումնասիրության արդյունքների հավաստիությունը ապահովվում է մանկավարժական հետազոտություններին ներկայացվող պահանջների և գիտափորձի ընթացքի համապատասխանելությամբ, կիրառված մեթոդների և մեթոդիկաների հուսալիությամբ, հետազոտվող երեխաների անհրաժեշտ թվաքանակի ընտրությամբ, տեսական վերլուծության և փորձարարական աշխատանքի արդյունքներից բխող եզրակացություններով: Հետազոտության կազմակերպման ընթացքն ու ստացված արդյունքները պարբերաբար քննարկվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնում:

**Հետազոտության փորձաքննությունը:** Հետազոտության արդյունքները զեկուցվել են Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնում, մանկավարժության և նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնների համատեղ նիստում, գիտաժողովներում:

Ատենախոսության թեմայով տպագրվել են հոդվածներ հանրապետության մասնագիտական ամսագրերում, գիտական ժողովածուներում, հրատարակվել է ուսումնաօժանդակ ձեռնարկ:

**Հետազոտության արդյունքները** ներդրվել են Երևան քաղաքի Կենտրոն և Շենգավիթ վարչական շրջանների թիվ 5,20,126 մանկապարտեզներում:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը կառուցված է ներածությունից, երեք գլուխներից, որոնցից երկուսը տեսական են, երրորդը՝ փորձարարական, եզրակացություններից և 157 անուն գրականության ցանկից:

Ատենախոսության ընդհանուր ծավալը համակարգչային շարվածքով կազմում է 143 էջ:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ցույց է տրված հիմնախնդրի մշակվածության աստիճանը, ներկայացված են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, վարկածը, նպատակից բխող հետազոտական խնդիրները, տեսական և մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը, փորձաքննությունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Աշխատանքի առաջին՝ **«Նախադպրոցականի դաստիարակության հիմնախնդրի պատմատեսական հիմքերը»** գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:

**Առաջին «Ազգային մտածողության ձևավորման գաղափարը հայ մանկավարժական մտքի զարգացման համատեքստում» ենթագլխում** քննարկվում է հայ մանկավարժական մտքի ու մշակույթի բուռն զարգացումը 5-10 դարերում համահայկական միասնական գրի (**Մեսրոպ Մաշտոց** ), հայագիր-հայալեզու դպրոցի ստեղծման, հայ գրականության տարածման շնորհիվ, ինչը իր

հերթին խթանել է ժողովրդի ինքնաճանաչման, ինքնագիտակցման գործընթացների և սերմանել ազգային արժանապատվություն: Մանկավարժության ականավոր ներկայացուցիչների (**Անանիա Շիրակացի, Ստեփանոս և Սահակադուխտ Սյունեցիներ, Աթանաս Տարոնացի, Մաթուսաղա**) մանկավարժական մտքի և գործունեության շնորհիվ Հայաստանում 5-10 դարերում գործում էին բարձրակարգ դպրոցներ, ուր սովորելու և կատարելագործվելու էին գալիս նաև այլ երկրներից: Այսպիսով, անգամ պետականազուրկ ժամանակահատվածներում հայ ժողովուրդը ունեցել է հոգևոր և աշխարհիկ ուսումնական հաստատություններ, որոնք պահպանել և ամրապնդել են ազգային ոգին, նպաստել են ազգային մտածելակերպի, ու գիտակցության զարգացմանը, հայ տեսակի և ազգի կատարելագործմանը:

Ազգապահպան կրթությունը հատկապես կարևորվել է գոյատևման ծանր պայքարի տարիներին, անբարենպաստ իրողության պայմաններում:

Նշվում է, որ 12-րդ դարի մանկավարժական մտքի վառ ներկայացուցիչներից է Կիլիկիայի կաթողիկոս **Ներսես Շնորհալի Պահլավունի**ն, որն իր գրական-մանկավարժական երկերում, խրատական-ուսուցողական ոտանավորներում բարոյական խրատներ է տալիս, առաջնահերթ կարևորելով հայրենասիրությունն ու ազգային նվիրվածությունը: Ազգային մտածողության ձեռքբերմանը նպաստել են նաև Այրիվանքի դպրոցի ղեկավար-ուսուցչապետ **Մխիթար Այրիվանեցու** (13-րդ դար) ճառերն ու խրատները:

19-րդ դարի 60-ական թվականներից սկսած աշխարհիկ ոգին դպրոցում դառնում է գերիշխող շնորհիվ հետևյալ մեծանուն մանկավարժների՝ Ղ. Աղայանի, Ս. Մանդինյանի, Ա. Բահաթրյանի, Խրիմյան Հայրիկի, Մ. Մամուրյանի, Խ. Ստեփանեի, Հ. Հինդլյանի, Գ. Էդիլյանի, Ա. Շավարշյանի, Ա. Մովսիսյանի և ուրիշների, և մի շարք հայ հայտնի արձակագիր-մանկավարժների ( Ռաֆֆի, Պ. Պռոշյան, Ռ. Պատկանյան):

19-20-րդ դարերում ժողովրդի ինքնագիտակցմանը, ազգային մտածելակերպի ձևավորմանը պետք է նպաստեր նոր՝ վերակառուցված և ժամանակի պահանջներից բխող պետական դպրոցն իր միասնական ռազմավարությամբ և ծրագրով: Դպրոցի և լուսավորության ասպարեզի գործիչները ճիշտ կողմնորոշվելով կրթության և ուսուցման կազմակերպման հարցերում, առավելությունը տալիս են ընդհանուր-հասարակական դաստիարակությանը, դպրոցը համարելով այն միակ միջավայրը, ուր երեխան հասակակիցների ընկերակցության մեջ պետք է ստանա իր հիմնական կրթությունը:

20-րդ դարում հայ մանկավարժական մտքի զարգացումն ու դպրոցաշինությունը Արևելյան Հայաստանում ընթանում էր երկրի խորհրդայնացման դրական և բացասական հետևանքների ներքո:

**Երկրորդ՝ «Հայ մանկավարժները նախադպրոցական տարիքի երեխաների ազգային դաստիարակության մասին»** ենթագլխում ներկայացվում է հայ ժողովրդի մանկավարժական մշակույթի և պրակտիկ գործունեության, ուսուցման և դաստիարակության այն սկզբունքների և եղանակների ուսումնասիրությունը, որոնք դարերի ընթացքում օգտագործվել են ազգի գոյատևման և պահպանման նպատակով: Մանկավարժական գործընթացի կազմակերպումը՝ ժողովրդի մանկավարժական նվաճումների վերլուծության, դրանց տեղին օգտագործման եղանակով, կարող է ազգային դաստիարակության հետաքրքիր տարբերակների մշակման հիմք հանդիսանալ: Ազգային խառնվածքի ու բնավորության, էթնիկական մտածելակերպի ձևավորման և սոցիալականացման առանձնահատկությունների, էթնոպաշտպան

մեխանիզմների, ավանդույթների և նույնիսկ վարքի կարծրաձևերի իմացությունը պարտադիր պետք է կիրառություն գտնի այսօրվա սերնդի ձևավորման գործընթացում՝ նախադպրոցական տարիքից սկսած:

Աշխարհիկ նոր դպրոցի ձևավորման հետ միաժամանակ, նրան կից որպես կրթության նախնական աստիճան, գործում էին նախակրթարան-ծաղկոցներ, որտեղ 4-6 տարեկան երեխաների հետ տարվում էր հատուկ մանկավարժական աշխատանք: Օրինավոր մանկան պարտեզներ ունենալու անհրաժեշտությանը անդրադարձել են 19-րդ դարի ականավոր շատ գործիչներ և մամուլի ներկայացուցիչներ: Հայկական նոր մանկապարտեզները, թեպետև հետևում էին նախադպրոցական դաստիարակության ֆրյոբելյան սկզբունքներին, սակայն հաշվի էին առնվում մեր ժողովրդի ազգային-կենցաղային առանձնահատկություններն ու պայմանները: Մանկապարտեզներում փոքրիկներն իրենց ժամանակն անցէին կացնում երգով, պարով, խաղով, մարմնամարզությամբ, զբոսանքներով: Մանկապարտեզներում աշխատելու էին հրավիրվում միջնակարգ այնպիսի դպրոցներ ավարտած աղջիկները, որտեղ ուսուցանում էին նաև մանկական խաղեր, երգեր և պարեր:

19-20-րդ դարերի հայ մանկավարժության ներկայացուցիչները իրենց աշխատություններում անդրադառնան նախադպրոցականի ազգային դաստիարակության հիմնախնդրին, հատկապես ազգային մտածելակերպի ձևավորմանը: Դպրոցի և լուսավորության ասպարեզի գործիչները առավելությունը տալիս էին ընդհանուր-հասարակական դաստիարակությանը, դպրոցը համարելով այն միակ միջավայրը, ուր երեխան հասակակիցների ընկերակցության մեջ ստանում է իր հիմնական դաստիարակությունը, կրթությունը, ուսուցումը: Դպրոցներում ուսումնակրթական, դաստիարակչական աշխատանքները կազմակերպվում էին դասարանա-դասաժամային (դաս-դասարանային) համակարգով, դասավանդող ուսուցիչների մեծ մասն ուներ մասնագիտական լավ կրթություն, մանկավարժական բավարար վարպետություն, կիրառվում էին մանկավարժական գիտության պահանջներին համապատասխանող այլաբնույթ մեթոդներ:

Երրորդ **«Ս.Արղությանի մանկավարժական հայացքները նախադպրոցականի համակողմանի դաստիարակության վերաբերյալ»** ենթագլխում նկարագրված է նախադպրոցականի ներդաշնակ զարգացման գործում բարոյա-աշխատանքային դաստիարակության առանձնահատուկ կարևորումը Ս. Արղությանի կողմից, որը կոչված է նպաստելու թե հասարակության բարոյական մակարդակի բարձրացմանը և թե լիարժեք անձնավորության ձևավորմանը: Ս. Արղությանը աշխատանքային դաստիարակության հարցում մեծ նշանակություն էր տալիս համատեղ աշխատանքին, հերթապահությանը և հանձնարարություններին: Նրա մանկապարտեզում երեխաները բազմապիսի աշխատանքներ էին կատարում: Նա հատկապես կարևորում էր ձեռքի աշխատանքը՝ գտնելով, որ ձեռքի ճիշտ դաստիարակությունը մտքի դաստիարակությունն է: Գեղագիտական դաստիարակության նախադրյալներն, ըստ Ս. Արղությանի, պայմանավորված են երեխայի կողմից գեղեցիկն անմիջականորեն ընկալելու ընդունակությամբ և գեղարվեստական կերպարների ամբողջական ըմբռնմամբ: Գեղագիտական դաստիարակության համակարգում նա ընդգծված կարևորում է երաժշտական դաստիարակության դերը, նշելով, որ հատկապես ազգային երգն ու պարը սնում են երեխայի հոգին և գերագույն հաճույք պատճառում: Ֆիզիկական դաստիարակությունը Ս. Արղությանի կողմից դիտվում էր որպես մարդու ներդաշնակ զարգացման անհրաժեշտ պայման: Նախադպրոցականի մտավոր

դաստիարակության գործընթացում նա առաջնահերթ կարևորում է մայրենի լեզվի յուրացման և կապակցված խոսքի զարգացման միջոցով երեխայի մտածողության զարգացումը:

Հիմնավորվում է, որ ազգային մտածելակերպի ձևավորման գործընթացում անփոխարինելի է էթնիկական սոցիալականացման դերը: Էթնիկ միջավայրն իր ուրույն գոյությամբ և նպատակային ներգործությամբ նոր լույս աշխարհ եկած մանուկներին դարձնում է իրենց ծնած էթնոսի՝ ազգի հիմնական հատկանիշների, էթնիկականության կրողներ: Ըստ Ս. Արղությանի էթնիկական հատկանիշները սոցիալականացվող անհատին փոխանցվում են ազգային մշակույթի բովանդակությունը յուրացնելու, այն ներքնայնացնելու միջոցով: Մշակույթը ներառում է մայրենի լեզուն և գրականությունը, ավանդույթները, էթնիկական դերերն ու փոխհարաբերությունները, ընտանեկան և կենցաղային սովորությունները, սիմվոլներն ու կարծրատիպերը, էթնոսի «ես – նկարագիրը», կրոնական, հոգևոր արժեքները և այլն: Այս ամենը մշակվում և իմաստավորվում է անհատի հոգեկանում և դառնում ազգային հոգեկերտվածք: Նախ և առաջ Ս. Արղությանը ազգային դաստիարակությունը համարում է բարոյական դաստիարակության անբաժանելի մաս և հորդորում է ձևավորել մեծատառով «Մարդ» հասարակության համար պիտանի անձնավորություն: Բարոյականության և ազգասիրության հիմքը դրվում է ընտանիքում, սակայն մեծ աշխատանք ունեն անելու այդ ուղղությամբ մանկական պարտեզի դաստիարակները: Նրա խորը համոզմամբ ազգային դաստիարակության հինքում ընկած են համազգային արժեքները:

Աշխատանքի երկրորդ՝ «**Սոֆյա Արղությանի՝ նախադպրոցականի դաստիարակության և ուսուցման վերաբերյալ մանկավարժական հայացքները ժամանակակից նախադպրոցական մանկավարժության հիմնախնդիրների համատեքստում**» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

**Առաջին «Սոֆյա Արղությանի դիդակտիկական հայացքները» ենթագլխում** խոսվում է այն մասին, որ Ս. Արղությանի դիդակտիկական հայացքների հիմքում ընկած են հանրաճանաչ Ֆ. Ֆրյոբելի և Մ. Մոնտեսսորիի մանկավարժական մոտեցումները՝ կառուցված երեխային ճանաչելու, ուսումնասիրելու և ուղղորդելու սկզբունքով: Նրա խոր համոզմամբ Ֆ. Ֆրյոբելի և Մ. Մոնտեսսորիի ուսուցման սկզբունքները չեն հակասում միմյանց, հակառակը՝ լրացնում են, հետևաբար իրավացի չեն նրանք, ովքեր կիրառում են բացառապես որևէ մեկի համակարգը:

Ս. Արղությանը մանկապարտեզում կարևոր տեղ էր տալիս երեխաների գրագիտությանը: Առաջնորդվելով Մ. Մոնտեսսորիի համակարգով՝ նա կազմում է գրագիտության ծրագիր՝ մանկապարտեզի և այբենարանի դասարանի երեխաների համար, որի միջոցով սովորեցնում է գրել և կարդալ առանց «գրելու և կարդալու»: Ուսուցման գերխնդիր համարելով երեխային մտածել սովորեցնելը՝ Ս. Արղությանը գտնում էր, որ գիտելիքները, մտքերն ու պատկերացումներն երեխային պետք է հաղորդվեն ոչ թե ուղիղ ճանապարհով, այլ մղեն ինքնուրույն որոնումների, դատողությունների միջոցով պատասխանը գտնելուն: Չափազանց արժեքավոր են Ս. Արղությանի հայացքները նախադպրոցականի ուսուցման և բարոյական դաստիարակության փոխկապակցվածության մասին: Նրա համոզմամբ, խելացիորեն ընտրված և դասավորված ուսումնական նյութը երեխաներին բնական ճանապարհով ներարկում է բազմաթիվ բարոյական հատկություններ և մղում կամային գործողությունների: Ըստ Ս. Արղությանի՝ նախադպրոցականի ուսուցման արդյունավետությունն ուղղակիորեն կախված է դաստիարակի մանկավարժական վարպետությունից:

**Երկրորդ՝ «Ս. Արղությանի՝ նախադպրոցականի դաստիարակության և ուսուցման մասին մանկավարժական մոտեցումների կիրառման նպատակահարմարությունը ժամանակակից նախադպրոցական հաստատություններում» ենթագլխում** ներկայացվում է, որ Ս. Արղությանի մանկավարժական հայացքները նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության և ուսուցման վերաբերյալ լուսաբանված են նրա «Մանկական պարտեզ» գիտամեթոդական ձեռնարկում, որի մանրակրկիտ և ժամանակամետ վերլուծությունը կարող է ուսանելի լինել և նոր ուղիներ առաջարկել այսօրվա երեխային ազգային ոգով դաստիարակելու գործում:

Ս. Արղությանի մանկավարժական մոտեցումները նախադպրոցական և տարրական, կրթության վերաբերյալ համապատասխանում են կրթության ռազմավարության ժամանակակից պահանջներին: Ուսանելի են Ս. Արղությանի բարոյական դաստիարակության սկզբունքները, որոնք հորդորում են երեխային դիտարկել որպես բարձրագույն արժեքի, և « երեխաների հետ վարվել այնպես, ինչպես մեծ, հասկացող մարդու հետ..»: Հետաքրքիր են Ս. Արղությանի աշխատանքային դաստիարակության և միաժամանակ ուսուցման մանկավարժական մոտեցումները: Առանձնահատուկ կարևորելով ձեռքի աշխատանքի դերն ու նշանակությունը նախադպրոցական տարիքում, առաջարկում են բնական նյութերով (կավ, սիսեռ, տաշեղ, թելեր, սերմեր, պտուղներ, ծաղիկներ, տերևներ, ծխախոտի թուղթ, շերամ, բոժոժ, խցան) համատեղ աշխատելու մեթոդիկաներ, որոնք հաջողությամբ կարող են կիրառվել ժամանակակից մանկապարտեզներում: Աշխատանքային դաստիարակությունը նախադպրոցական տարիքում, ըստ Ս. Արղությանը, սերտորեն կապված է գեղագիտական դաստիարակության հետ: Գեղագիտական դաստիարակության ընթացքում շեշտադրված կարևորելով երաժշտական դաստիարակության դերը երեխայի կյանքում, առաջարկում է մանկական պատմությունների (պիեսների) բեմադրման տարբերակներ: Նախադպրոցականի մտավոր զարգացման գործընթացում առաջնահերթ կարևորում է զգայական դաստիարակությունը:
Ազգային դաստիարակությունը համարելով երեխայի համակողմանի դաստիարակության կարևորագույն բաղադրիչ՝ Ս. Արղությանն առաջարկում է ազգային մտածողության զարգացման տեսական դրույթներ և մեթոդական մոտեցումներ, որոնք, ցավոք, իր կողմից չեն ներկայացվել ամփոփ մեթոդիկայի տեսքով:

Սույն ուսումնասիրությամբ կփորձենք ներկայացնել ժամանակակից նախադպրոցականի ազգային դաստիարակության մեթոդիկայի ուրույն մի տարբերակ՝ կառուցված Սոֆյա Արղությանի հիմնարար մանկավարժական մոտեցումների հաշվառմամբ:

**Երրորդ «Ս. Արղությանի մանկավարժական շեշտադրումների հիման վրա կառուցված նախադպրոցականի ազգային մտածողության զարգացման մեթոդիկայի առանձնահատկությունները» ենթագլխում** ներկայացված են Սոֆյա Արղությանի մանկավարժական դիրքորոշումները նախադպրոցականի ազգային դաստիարակության վերաբերյալ, որոնք առաջարկում են կրթական խնդիրների լուծման եղանակներ հայ հասարակության զարգացման ճգնաժամային պայմաններում:

Ազգային դաստիարակության ելակետը կրթության համակարգի բոլոր աստիճաններում, այդ թվում և նախադպրոցական, կրթության բովանդակությունն է՝ մատուցվող գիտելիքների ազգային ուղղվածությամբ: Ս. Արղությանի կողմից առաջարկված պարապմունքների բովանդակությունը, դրանց կազմակերպման և անցկացման մեթոդիկան, օգտագործվող դիդակտիկ պարագաներն ու նյութերը՝

որպես մանկավարժական յուրահատուկ մոտեցումներ, կարող են օգտագործվել ժամանակակից մանկապարտեզի մանկավարժական գործընթացում՝ ավագ նախադպրոցականներին ազգային առանձնահատկությունների մասին գիտելիքներ փոխանցելու նպատակով: Ս. Արղությանի բարոյա-աշխատանքային դաստիարակության մեթոդիկան կոչված է նպաստելու ազգային պատկանելիության գիտակցմանը և հանրօգուտ ազգանպաստ գործունեության արժևորմանը: Այն նույնպես կիրառելի է ավագ նախադպրոցական տարիքում: Խաղային գործունեությունն, ըստ Ս. Արղությանի, նախադպրոցականների ձեռքբերումների դրսևորման լավագույն միջոցն է:

Այսպիսով, Ս. Արղությանի մանկավարժական շեշտադրումներով կառուցված նախադպրոցականի ազգային դաստիարակության գործընթացն ենթադրում է մանկավարժական աշխատանքներ երեք ուղղություններով՝ *համալիր պարապմունքների կազմակերպում, ազգային դաստիարակության մեթոդիկայի մշակում, խաղերի ուղղորդում:*

Աշխատանքի երրորդ «**Ս.Արղությանի՝ մանկավարժական գաղափարների հիման վրա ազգային մտածողության զարգացման մանկավարժական պայմանները նախադպրոցական տարիքում**» գլուխը կազմված է երեք ենթագլխից:

**Առաջին՝ «Նախադպրոցականի ազգային մտածողության զարգացման հոգեբանամանկավարժական պայմանները» ենթագլխում** ներկայացված է նախադպրոցական կրթության ժամանակակից հայեցակարգը, որը կարևորում է ինքնուրույն և հաղորդակցման պատրաստ, սոցիալական միջավայրում ազատ կողմնորոշվող և սեփական արժանիքներն օբյեկտիվորեն գնահատող անձնավորության ձևավորումը: Հայեցակարգի հիմքում դրված է յուրաքանչյուր երեխայի անհատականության բացահայտումը, որի բաղկացուցիչ մասն են կազմում նրա ազգային մտածելակերպի տարրերը: Նախադպրոցական տարիքում աշխարհի ժողովուրդների նկատմամբ դրական վերաբերմունք է ձևավորվում ազգայինի մեջ համամարդկայինը առանձնացնելով: Նախադպրոցականի դաստիարակության գերխնդիրներից է երեխային դեպի համընդհանուր մարդասիրական արժեքներ ուղղորդելը, որին կարելի է հասնել ազգային առանձնահատկություններին և մշակութին ծանոթացնելու միջոցով:

Նախադպրոցական կրթական հաստատություններում, այսօր, իրականացվում է ծանոթացում հասարակական երևույթներին և դրանց հանդեպ որոշակի վերաբերմունքի ձևավորում: Երեխային փոխանցվում են գիտելիքներ ընտանիքի և հայրենիքի, ծնողների մասնագիտության և աշխատանքի, ազգային խորհրդանիշերի և վառ ներկայացուցիչների մասին: Սակայն, նշվածից բացի, Ս.Արղությանը կարևորում է նաև ազգամետ դիրքորոշումների ձևավորումը, նշելով, որ մանկապարտեզը երեքից-յոթ տարեկան երեխաների համար այն կրթական հաստատությունն է, որտեղ սկսում են դրսևորվել յուրաքանչյուրի մարդասիրական մոտեցումներն ու այն սոցիալ-անձնային հատկությունները, որոնք հնարավորություն են տալիս երեխային ինքնահաստատվելու հասակակիցների միջավայրում, հետագայում՝ հասարակական կյանքում:

**Երկրորդ՝ «Նախադպրոցականի ազգային մտածողության ձևավորմանն ուղղված փորձարարական հետազոտության կազմակերպման առանձնահատկությունները, խնդիրները, փուլերը, անցկացման մեթոդիկան» ենթագլխում** անդրադարձ է արվել Սոֆյա Արղությանի դաստիարակության սկզբունքներին նշելով, որ դրանք նպատակ ունեն առաջին հերթին պահպանել մանուկների ազգային ինքնությունն ու նպաստել ազգային մտածելակերպի ձևավորմանը: Ս.Արղությանի խորին համոզմամբ կրթական բոլոր

հաստատությունների, հատկապես դպրոցի և մանկապարտեզի գլխավոր առաքելությունը՝ իր ժողովրդին նվիրված քաղաքացու և հասարակական գործչի ձևավորումն է: Նախադպրոցականի ազգային մտածելակերպի տարրերի ձևավորումն ու դրսևորումները պայմանավորված են մանկապարտեզում իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների նպատակահարմարությամբ, կրթության բովանդակության ազգային ուղղվածությամբ, ինչպես նաև դաստիարակների և ծնողների սոցիալական դիրքորոշումներով:

Ենթագլխում ներկայացված է մեր կողմից մշակված նախադպրոցականի ազգային մտածելակերպի տարրերի ձևավորմանն ուղղված մանկավարժական աշխատանքների ծրագրի կառուցվածքն իր բոլոր բաղադրիչներով:

**Երրորդ՝ «Նախադպրոցականի ազգային մտածողության ձևավորմանն ուղղված փորձարարական հետազոտության ընթացքը և արդյունքների վերլուծությունը» ենթագլխում** ներկայացված են ձևավորող գիտափորձի արդյունքները:

Ներկայացված են նախադպրոցական տարիքի երեխաների ազգային մտածելակերպի ձևավորմանն ուղղված գիտափորձի ընթացքը, արձանագրող գիտափորձի խնդիրները:

Արձանագրող գիտափորձի ընթացքում նախադպրոցականի ազգային մտածողության բացահայտման նպատակով կիրառվել են դիտումներ, զրույցներ, հարց ու պատասխան, անկետավորում:

Դիտարկելով և ուսումնասիրելով փորձարարական խմբի երեխաներին մեր նպատակն էր բացահայտել յուրաքանչյուր երեխայի պատկերացումները ազգային առանձնահատկությունների և մշակույթի մասին, որոշել նրանց ազգային պատկանելիության գիտակցման մակարդակը, նշված չափանիշները համարելով ավագ նախադպրոցականի ազգային մտածելակերպի տարրեր: Գնահատվել է նաև փորձարարական խմբերում ազգային դաստիարակության ուղղությամբ տարվող մանկավարժական աշխատանքների նպատակաուղղվածությունն ու արդյունավետությունը:

Արձանագրությունների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ երեխաները ոգևորությամբ են կատարում բոլոր առաջադրանքները, սակայն հարկ է նշել, որ նրանք ավելի շուտ հուզականությամբ էին ընկալում այդ ամենը: Իհարկե կային որոշակի թվով երեխաներ, որոնք ընկալում էին ըստ էության: Հիմնականում երեխաները ոգևորվում էին, կատարում առաջադրանքները, սակայն գիտակցաբար չէին ընկալում ազգային արժեքների էությունը, դրանց պահպանման անհրաժեշտությունը: Այստեղ որոշակի էր նաև դաստիարակի դերը: Երեխաների ազգային մտածելակերպի մակարդակի գնահատման համար կիրառվել են չափորոշիչ բալերով գնահատելու մեթոդիկան: Ձևավորող գիտափորձի առաջին փուլի ընթացքում ուսուցանող պարապմունքների, միջոցառումների, ընթերցումների ընթացքում յուրաքանչյուր երեխայի ազգային մտածելակերպի մակարդակը գնահատվել է հետևյալ բալերով՝ բարձր – 10 բալ. միջին – 5 բալ, ցածր – 1 բալ**:** Համալիր պարապմունքներում բարձր մակարդակ էր համարվում այն, երբ երեխան գիտակցում և հիմնավորում էր իր ազգային պատկանելիությունը, ընկալում էր ազգային մշակույթի դերն ու նշանակությունը մարդու կյանքում: Միջին մակարդակին բնորոշ էր ազգային պատկանելիության գիտակցում, սակայն ազգային մշակույթի դերի և նշանակության ընկալման ցածր աստիճան: Ցածր մակարդակ էր արձանագրվում, երբ նշված հատկանիշները բացակայում էին կամ աղոտ էին արտահայտված: Ստացված տվյալների հիման վրա բացահայտվեց, որ և՛ փորձարարական և՛ ստուգողական խմբերում

երեխաների ազգային մտածելակերպի մակարդակներում էական տարբերություն չկա: Գիտափորձի ձևավորող փուլում իրականացվող նպատակաուղղված մանկավարժական աշխատանքների արդյունքում փորձարարական խմբում արձանագրվեց ազգային մտածելակերպի դրսևորման զգալի աճ: Աղյուսակ 1-ում և գծապատկերներում ներկայացված են փորձարարական հետազոտության արդյունքները.

**Փորձարարական հետազոտության արդյունքները**

Աղյուսակ 1

| Փորձարարական աշխատանքների փուլերը | նախադպրոցականների թիվը | | նախադպրոցականի ազգային մտածելակերպի ձևավորման մակարդակները | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ցածր | | միջին | | բարձր | |
| | ս | փ | ս | փ | ս | փ | ս | փ |
| արձանագրող | 30 | 30 | 22 երեխա 73% | 20 երեխա 67% | 7 երեխա 24% | 8 երեխա 27% | 1 երեխա 3% | 2 երեխա 6% |
| ձևավորող | 30 | 30 | 22 երեխա 73% | 2 երեխա 6% | 7 երեխա 24% | 5 երեխա 17% | 1 երեխա 3% | 23 երեխա 77% |
| ստուգիչ | 30 | 30 | 22 երեխա 73% | 2 երեխա 6% | 7 երեխա 24% | 5 երեխա 17% | 1 երեխա 3% | 23 երեխա 77% |

**Ավագ նախադպրոցականների ազգային մտածելակերպի ձևավորման մակարդակը փորձարարական խմբում (գիտափորձի արձանագրող և ստուգիչ փուլեր)**

Գծապատկեր թիվ 1




Արձանագրող փուլ Ստուգիչ փուլ

**Ավագ նախադպրոցականների ազգային մտածելակերպի ձևավորման մակարդակը ստուգողական խմբում ( գիտափորձի արձանագրող և ստուգիչ փուլեր)**

Գծապատկեր թիվ 2




Արձանագրող փուլ Ստուգիչ փուլ

Փորձարարական աշխատանքների ձևավորող փուլի ընթացքում կիրառվել են մանկավարժական տարբեր մեթոդներ և հնարներ, օգտվել ենք նաև փոխգործուն մեթոդներից.

- ստեղծվել են խաղային համապատասխան իրադրություններ, որտեղ դրսևորվել են հայ ազգային ավանդույթները,
- ցուցադրվել են ազգային արժեքներ ներկայացնող իրեր, առարկաներ, տեսարժան վայրեր պատկերող նկարներ,
- կազմակերպվել են անհատական և խմբային թեմատիկ զրույցներ,
- գեղարվեստախոսքային գործունեության ընթացքում երեխաները երգի, պարի, արտասանելու միջոցով ներկայացրել են հայ դասական գրողների, երաժիշտների ստեղծագործությունները,
- հանդեսներին, միջոցառումներին, մշակույթի անվանի մարդկանց ներկայությունը ապահովել է երեխաների դրական, հուզական վիճակը, պատասխանատվության զգացումը, ինչպես նաև սերն ու հարգանքը մշակույթի անվանի գործիչների հանդեպ:

Նշված մեթոդները լրացվել են տարբեր հնարներով՝ բացատրություններ, կրկնություններ, հարցադրումներ, դիտողություններ, հիշեցումներ, խրախուսանքներ, իսկ խաղային հնարները կիրառվել են թե՛ համալիր պարապմունքների, թե՛ կազմակերպված հանդեսների, միջոցառումների ընթացքում:

**Չորրորդ՝ «Նախադպրոցականի ազգային մտածողության ձևավորմանն ուղղված մեթոդական հանձնարարականներ» ենթագլխում** ներկայացված են նախադպրոցական տարիքի երեխաների ազգային մտածելակերպի ձևավորման նպատակով գիտափրձի ընթացքում մեր կողմից մշակված և կիրառված թեմատիկ զրույցներ, պարապմունքներ տարբեր մեթոդիկաներից, խաղեր:

Ատենախոսության հիմնախնդրի տեսական վերլուծությունն ու կատարված փորձարարական հետազոտության արդյունքների ամփոփումը հնարավորություն տվեցին ձևակերպելու հետևյալ **եզրահանգումները**.

1. Ս. Արղությանի նախադպրոցականի դաստիարակության և ուսուցման վերաբերյալ մանկավարժական գաղափարների վերլուծությունն և վերաիմաստավորումը բացահայտում է ազգային մտածելակերպի ձևավորման նոր եզրեր, հնարավորություն տալով մշակելու նախադպրոցականի հայեցի դաստիարակության ժամանակահունչ մեթոդիկա, որի կառուցման սկզբունքները համապատասխանում են նախադպրոցական կրթության գործող հայեցակարգի պահանջներին:
2. Նախադպրոցական կրթության ժամանակակից հայեցակարգի հիմնական պահանջն է յուրաքանչյուր երեխայի անհատականության բացահայտումը, որի բաղկացուցիչ մասն են կազմում ազգային մտածելակերպի տարրերն ու դրանց դրսևորումները: Մասնավորապես, գիտակցված ազգային պատկանելիությունը, էթնիկ կենսակերպի հատկանիշները, ազգային վարքագծին բնորոշ ուրվագծերը, ազգային գիտակցության և մտածողության դրսևորումները:
3. Ս. Արղությանի գաղափարային հենքով մշակված ազգային դաստիարակության մեթոդիկայի կիրառման պայմաններում երեխաների մեջ աստիճանաբար առաջանում է ազգային պատկանելիության զգացողություն, որն իր հերթին նպաստում է ազգային գիտակցության և մտածողության զարգացմանը: Արդյունքում, նախադպրոցական տարիքում արդեն դրսևորվում են հայրենասիրական մտքեր և ազգային մտածելակերպի հատկանիշներ:

Համաձայն Ս. Արղությանի մանկավարժական հայացքների.

- ազգային պատկանելիության գիտակցումը խթանվում է բարոյական դաստիարակության ընթացքում ազգային արժեքների փոխանցմամբ,
- աշխատանքային դաստիարակության շնորհիվ երեխան սովորում է գործել համատեղ և ընկալել հանրօգուտ, հետևաբար և ազգանպաստ գործունեության անհրաժեշտությունը,
- պարապմունքները՝ փոխանցվող հայրենասիրական գիտելիքների շնորհիվ, նպատակաուղղված ձևավորում են ազգային դիրքորոշումներ և մտածելակերպ;
- ազգային արժեքներն ու դիրքորոշումները փորձարկվում են խաղային գործունեության ընթացքում, խաղը միաժամանակ հանդես է գալիս որպես ազգային մտածելակերպի դրսևորման, փորձարկման, ինչպես և ձևավորման աստիճանի գնահատման միջոց:

4. Գիտափորձով ապացուցվել է, որ նախադպրոցականի ազգային մտածելակերպի ձևավորման մեթոդների, միջոցների համալիր ընտրությունը (խաղեր, հատուկ կազմակերպված պարապմունքներ, թեմատիկ զրույցներ, ազգային ծեսեր և տոնակատարություններ, հանդեսներ) նպատակաուղղված է դարձնում նախադպրոցական տարիքի երեխաների ազգային դաստիարակության գործընթացը: Հիմնավորվել և փորձարարական ճանապարհով հաստատվել է Ս.Արղությանի մանկավարժական հայացքների հիման վրա մշակված հայեցի դաստիարակության մեթոդիկայի արդյունավետությունն ավագ նախադպրոցականների ազգային մտածելակերպի ձևավորման գործընթացում:
5. Նախադպրոցականի ազգային մտածելակերպի ձևավորմանն ուղղված մանկավարժական համակարգը բաղկացած է հաջորդաբար իրականացվող հետևյալ գործընթացներից.

- համալիր պարապմունքների շարունակական կազմակերպում՝ հայրենասիրական գիտելիքների փոխանցմամբ;
- բարոյական դաստիարակություն՝ ուղղված ազգային արժեքների յուրացմանը;
- համատեղ աշխատանքային գործունեության կազմակերպում՝ ուղղված հանրօգուտ, ազգանպաստ գործունեության առավելությունների ընկալմանը;
- խաղային գործունեության խթանում՝ ազգային մտածելակերպի դրսևորման, փորձարկման, ինչպես և գնահատման նպատակով:

6. Գիտափորձի արդյունքները ցույց տվեցին, որ Ս. Արղությանի գաղափարային հենքով կառուցված ազգային դաստիարակության մեթոդիկան կիրառելի է մանկապարտեզի կրտսեր երկրորդ, միջին և ավագ խմբերում, այն առավել արդյունավետ է ավագ նախադպրոցական տարիքի երեխաների ազգային մտածելակերպի տարրերի ձևավորման գործում: Մեթոդիկան նպաստում է հայրենիքի մասին բազմաժավալ գիտելիքների և արժեքների յուրացմանը, ազգային պատկանելիության գիտակցմանը, հանրօգուտ, հետևաբար և ազգանպաստ գործունեության անհրաժեշտության ընկալմանը, էթնիկ կենսակերպին և ազգային վարքագծին բնորոշ տարրերի դրսևորմանը:
   Ս. Արղությանի գաղափարային հենքով կառուցված և փորձարկված ազգային դաստիարակության մեթոդիկան կարող է հաջողությամբ կիրառվել ժամանակակից նախադպրոցական հաստատությունների մանկավարժական գործընթացում: Այն նաև նախադպրոցահասակ երեխաների հայրենասիրական դաստիարակությունն ընտանիքում կազմակերպելու ուղեցույց է:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը արտացոլված է հրատարակված հետևյալ աշխատանքներում՝


1. Սահակյան Մ. Ա., «Սոֆյա Արղությանի մանկավարժական հայացքները» , Երևան 2009թ.Նախաշավիղ 3-4, էջ 33-34
2. Սահակյան Մ. «Սոֆյա Արղությանի հայացքները նախադպրոցականի խաղային գործունեության վերաբերյալ», Նախադպրոցական կրթություն ամսագիր, Մանկավարժական միտք հանդեսի հավելված, Երևան 2009թ.էջ 77-80
3. Սահակյան Մ., Ղազարյան Ա. «Նախադպրոցականի բարոյական դաստիարակության խնդիրները Սոֆյա Արղությանի կրթադաստիարակչական համակարգում», Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, Երևան 2009թ., էջ 60-63
4. Սահակյան Մ. «Նախադպրոցականի ազգային դաստիարակության հիմնահարցերը Սոֆա Արղությանի մանկավարժական հայացքներում», Ուսումնաօժանդակ ձեռնարկ, Երևան 2011թ. էջ 58
5. Սահակյան Մ. «Սոֆյա Բաբայանի Ֆրեոբելյան և Զրկինենց մանկապարտեզները», Մխիթար Գոշ ՝ գիտամեթոդական հանդես, 10-12/ 2013, էջ 67-69

**СААКЯН МАРИНЕ АНАТОЛЬЕВНА**

**Проблемы воспитания и обучения дошкольников в педагогических взглядах Софьи Аргутян**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01- “Теория и история педагогики”

Защита диссертации состоится 22-го мая 2014 года в 14.00 на заседании специализированного совета 020 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу 0010, г. Ереван, ул. Тигран Меци 17.

## Резюме

**Актуальность исследования**. Актуальность исследования обусловлена необходимостью разработки современных методик формирования национального сознания и способов мышления дошкольников посредством анализа и переосмысления педагогического наследия выдающихся представителей армянской дошкольной педагогики, в частности Софьи Аргутян – известного педагога и общественного деятеля второй половины 19-го века, без остатка преданного делу воспитания детей дошкольного возраста. Психологическо-педагогический анализ педагогических убеждений С. Аргутян показывает , что с точки зрения современной педагогики они содержат ряд ценных установок, которые могут быть использованы при реформировании действующих методик национального воспитания. Научный интерес вызывают те установки педагогических теорий С. Аргутян, которые содержат механизмы и методические приемы, способствующие формированию у детей дошкольного возраста чувства национальной принадлежности, проявлению признаков и элементов подсознательно передаваемых стереотипов национального мышления и мировоззрения.

Согласно действующей концепции дошкольного образования РА педагогическая деятельность должна быть направлена на раскрытие индивидуальности каждого ребенка, составной частью которой являются признаки национальности: чувство национальной принадлежности, элементы национального сознания и способов мышления. Педагогические установки С. Аргутян не противоречат требованиям современной концепции дошкольного образования РА, содержат ряд ценных методических разработок, которые были использованы нами в процессе формирования у детей старшего дошкольного возраста элементов национального сознания и способов мышления. В частности.

- передача знаний национально-патриотической направленности с целью формирования ориентиров национального мышления;
- формирование чувства национальной принадлежности в процессе передачи нравственных ценностей;
- стимулирование осознанной общественно значимой деятельности в процессе трудового воспитания;
- стимулирование игровой деятельности как способа проявления и оценки элементов национального мышления.

**Цель исследования**. Изучить педагогические взгляды С. Аргутян и раскрыть возможности их использования в процессе формирования способов национального мышления у детей дошкольного возраста.

**Научная гипотеза исследования.** Предполагается, что педагогические взгляды С. Аргутян могут быть использованы в современных дошкольных учреждениях, так как они

- имеют подчеркнутую национальную направленность, содержат механизмы формирования способов национального мышления ;
- отражают требования современного общества в переходный период развития, следовательно содержат варианты решения задач сохранения национальных признаков и особенностей.

**Задачи исследования.**

1. Проанализировать и переосмыслить педагогические взгляды С. Аргутян в контексте воспитания и обучения детей дошкольного возраста в целом, в частности, установки, направленные на формирование способов национального мышления старших дошкольников.
2. Обосновать и экспериментальным исследованием раскрыть возможности использования педагогических взглядов С. Аргутян в педагогическом процессе современных дошкольных учреждений.
3. Взяв за основу педагогические взгляды С. Аргутян, разработать комплексную программу педагогических воздействий с целью формирования элементов национального мировоззрения старших дошкольников.
4. Экспериментально доказать продуктивность разработанной комплексной педагогической программы.

**Научная новизна и теоретическое значение исследования.**

1. По-новому проанализированы и оценены педагогические взгляды С. Аргутян по национальному воспитанию дошкольников, предложен вариант их применения в современных дошкольных учреждениях.
2. Разработана комплексная педагогическая программа, направленная на развитие элементов национального мышления у детей старшего дошкольного возраста.
3. Теоретически обоснованы педагогические условия национального воспитания дошкольников, условия, направленные на развитие элементов национального мышления у детей старшего дошкольного возраста.

**Практическая значимость исследования.**

Разработанная и экспериментально проверенная методика формирования элементов национального мышления детей старшего дошкольного возраста может быть применена в педагогическом процессе современных дошкольных учреждений. Она может быть также ориентиром для родителей в вопросе национального воспитания детей в семье.

**Апробация исследования.**

Результаты исследования систематически докладывались на заседаниях кафедры дошкольной педагогики и методик АГПУ им. Х. Абовяна, на конференциях республиканского масштаба. По проблеме диссертационного исследования опубликованы 5 статей и учебно-методическое пособие.

Структура диссертации. Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка литературы / 157 наименований/.

Marine Anatoli Sahakyan

# THE PROBLEMS OF PRESCHOOLERS' UPBRINGING AND EDUCATION IN SOFYA ARGHUTYAN'S VIEWS

Research paper for acquisition of scientific degree in the field of pedagogical sciences, with specialization in "Theory and History of Pedagogy"-13.00.01

The defense of the dissertation will be held on 22th of May, 2014 at 14:00 at the session of the Special Board of Pedagogy 020 HAC (Higer Attetation Commission) on awarding degrees under the Kh. Abovyan Armenian State Pedagogical University, address: Tigran Mets 17 Avenue, 0010 Yerevan

## SUMMARY

**The subject matter** of the present paper is the study caused by the demand for another refers to the scientific heritage of prominent Armenian representatives in preschool pedagogy by detailed analysis, preschooler's upbringing in modern system. In the second half of the 19th century among famous Armenian women in active social movement and full with progressive ideas a well-known pedagogue, devoted to the work of upbringing a preschool child, publicly figured Sophia Arghutyan. Her social and pedagogical activity lasting half-century is closely linked with spreading of Armenian culture, development of pedagogical thought on the education of Armenian children. S. Arghutyan stressed the necessity to educate the child in patriotic, national ideas and traditions since the very early preschool age, as the characteristics of national identity and subconsciously transmitted the stereotypes of national mentality arose and show themselves. Detailed study and psychological-pedagogical analysis show that these ideas from the viewpoint of contemporary pedagogy contain several valuable statements, which can seriously reconstruct acting methods of patriotic, national and civil education. Therein S.Argutyan's statements of pedagogical theory which promote the immediate manifestation of national mentality elements in preschool age by different methods provoke scientific interest.

According to acting conception of preschool education of RA the pedagogical education should be oriented on each child's discovery preconditions directed to the awareness of national identity, which are formed instinctively and ethnic socialization:

. Forming preschooler's national mentality during moral upbringing;

.Peculiarities of preschooler's national mentality during working upbringing;

. Game as a way of preschooler's national mentality;

. Forming preschooler's national mentality during complex trainings.

**The aim of the research** is to study S. Arghutyan's pedagogical views deeply and to explain the possibility of their implementation in the process of preschoolers' national mentality formation.

**The scientific hypothesis of the research:** It is supposed that S. Arghutyan's pedagogical views are applicable in modern preschool institutions, since they

. have stressed national inclination, thus they can be effective in forming preschooler's national mentality.

. reflect modern social demands in the transmission period of development, thus they contain variant of solving similar problems.

**The objectives of the research are:**

1. To study and to analyze the peculiarities of the development of Armenian educational thought of XIX-XX cc. in the context of upbringing and study.
2. To study and to analyze S. Arghutyan's pedagogical views directed to the forming of preschooler's national mentality.
3. To ground and to disclose experimentally the possibilities of S. Arghutyan's pedagogic views in modern preschool institutions. Particularly, stressing on the peculiarities of national mentality during organization of moral and work upbringing, main approaches to bring up with patriotic ideas and ways and methods of providing content with national inclination during games and special organized trainings.
4. Taking as a basis the principal approaches of S. Arghutyan's pedagogic views, to prepare complex program directed to the formation of preschooler's national mentality.

**Scientific novelty and theoretical value of the research**

1. Newly analyze and estimate S. Arghutyan's pedagogic views in the process of upbringing, teaching and development of preschool children; an interesting variant of S. Arghutyan's pedagogic approaches in modern preschool institutions have been proposed.
2. Through scientific experience the applicability of S. Arghutyan's pedagogic heritage in modern preschool institutions has been checked and grounded by scientific experience.
3. Complex program of pedagogic works directed to the development of preschooler's national mentality has been developed, which is effectively applicable in preschool institutions, as well as in families.

**Practical value of the research:** S. Arghutyan's pedagogical views related to preschooler's upbringing and study are successfully applicable in modern preschool educational institutions. The complex program directed on the development of child's national mentality based on S. Arghutyan's pedagogic views concerning preschooler's upbringing and study promotes improvement of comprehensive upbringing and increase of effectiveness.